

## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԵՒ ԱԶԳ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՆԵՑԱՆ Ս. ՍՎՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀՈԳՎԲԱՐՁՈՒԹԵԱՆ ԵՒ ՓՐԵՍՓՈԽԱՎԱՆԵՐՈՒՄ ՀԵՏ

Երեքաբթի, Ապրիլ 11-ի երեկոյեան, Թեմիս բրատիսամ Առաջնորդ Բարձր. S. Սուշեղ Արք. Մարտիրոսեան եւ Ազգ. Վարչութեան անդամները հանդիպում ունեցան Փասատիևայի Սուլը Սարգիս Եկեղեցւոյ հոգեւոր հովիւին, Նորընտիր Հոգաբարձութեան եւ Երեսփոխանական կազմին հետ:

Ժողովի ընթացքին, Առաջնորդ Սրբազն Հայոք տեղեկութիւններ տուաւ Ազգ. Առաջնորդարանի կոօնսական եւ Վարչական աշխատանքներու մասին, կեդրոնանալով նոր շենքի, քրիստոնեական Դաստիարակութեան, Երիտասարդական միութեանց եւ այլ անմիջական աշխատանքներու վրայ:

Խորհրդակցութեան նիւթ եղան ծխական շոշանի աշխատանքներն ու ծրագիրները, որոնք կը միտին Եկեղեցւոյ բարեզարդման ու ծխական կեանքի առաւել աշխուժացման:

## PRELATE MEETS WITH ST. SARKIS PASTOR AND BOARD MEMBERS

On the evening of Tuesday, April 11, H.E. Arch. Moushegh Mardirossian, the Prelate and members of the Executive Council met with the pastor, Rev. Khoren Babochian, and the Board of Trustees and Delegates of Pasadena's St. Sarkis Church.

During the meeting, the Prelate spoke of the endeavors of the Prelacy, concentrating on the construction of the new building, Christian Education, and youth activities. Topics of discussion also included the activities of the parish.

\*\*\*\*\*

## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԹԵՐՐԱՆԻ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՅՈՒՐԴԻ ԱՏԵՆԱՊԵՏԸ

Զորեքաբթի, Ապրիլ 12-ին, Ազգային Առաջնորդարան այցելեց Թեհրանի Թեմական Խորհուրդի ատենապետ՝ տիար Նորայր Արամեան եւ հանդիպում մը ունեցաւ Առաջնորդ Սրբազն հօր հետ:

Հանդիպման ընթացքին Պր. Արամեան տեղեկութիւններ փոխանցեց Թեհրանի Թեմական Խորհուրդի աշխատանքներուն մասին: Առաջնորդ Սրբազնը, իր կարգին, տեղեկութիւններ տուաւ յատկապես Թեմիս աշխատանքներուն մասին:

## PRELATE MEETS WITH MR. NORAIR ARAMIAN, CHAIR OF PARISH COUNCIL OF TEHRAN

On the afternoon of Wednesday, April 12, the Prelate met with Mr. Norair Aramian, Chairman of the Parish Council of Tehran, at the Prelacy offices. During the meeting, Mr. Aramian briefed the Prelate about the activities of the Tehran Diocese. The Prelate, subsequently informed Mr. Aramian of all the activities and endeavors of the Western Prelacy.

\*\*\*\*\*

## ԱՌԱՋԱՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԱՒ ԱՐԾՄԵՆ ԱՅՎԱՉԵԱՆԻ ԳԻՐՁԻ ԳԻՆԵԶՕՆԻՆ

Չորեքշաբթի, 12 Ապրիլի երեկոյեան, Կլեստելի Royal Palace սրահին մեջ տեղի ունեցաւ գինեձօն, հայրենի մտաւորական Դոկտ. Արմեն Այվազեանի «Հայաստանի ազատագրուած տարածքը եւ Արցախի հիմնախնդիր» հատորին:

Ըսդառաջելով իրեն ուղղուած հրաւերին, Առաջնորդ Սրբազն հայրը ներկայ եղաւ գինեձօնին եւ իր մասնակցութիւնը բերաւ գիրքի օրինութեան:

## BLESSING OF BOOK

On the evening of Wednesday, April 12, the Prelate attended the book release reception in honor of Armen Ayvazian's book titled "The liberated territories of Armenia and the conflict of Artsakh."

The event took place at Royal Palace in Glendale.

\*\*\*\*\*

## ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆՑ ՀՈԳԵՒՐ ԼՍԱՐԱՆ

Թեմիս Եկեղեցիներու Երիտասարդական միութեանց Կերոնական Մարմինին կողմէ կազմակերպուած կրօնա-դաստիարակչական հոգեւոր լսարանին ծիրին մեջ, յաջորդ հանդիպումը տեղի պիտի ունենայ Կիրակի, Մայիս 14-ին, կ.ե. ժամը 5-ին, Կլեստելի Սուրբ Աստուածածին Եկեղեցւոյ «Արմենակ Տեր Պետրոսեան» սրահին մեջ:

Երիտասարդաց հաւաքը պիտի սկսի փունչ մը հոգեւոր Երգերու մատուցմամբ, ընկերակցութեամբ երաժշտական նուագարաններու:

Պիտի դասախոսէ Գերապ. S. Միւռոն Ծ. Վրդ. Ազնիկեան, Նիւթ ունենալով՝ «Ս. Մարիամ՝ Յամաձայն Յայ Եկեղեցւոյ Վարդապետութեան»:

### THIRD MEETING OF PRELACY RELIGIOUS EDUCATIONAL SERIES

We are pleased to announce that in May, the third lecture organized by the Prelacy Youth Central Directorate Committee will take place in Glendale. The gathering will take place on Sunday, May 14, at 5:00 p.m. at the Armenak Der Bedrossian Hall of St. Mary's Church in Glendale.

The lecture will begin with the singing of spiritual songs, after which Very Rev. Fr. Muron Aznikian will speak on the topic "The Virgin Mary according to the doctrine of the Armenian Apostolic Church".

\*\*\*\*\*